

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղերձը Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ**

12.08.2015



Մի րեւի՝ երիտասարդներ:

Սրտանց շնորհավորում եմ ձեզ Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ: Բոլոր ժամանակներում կյանքի զարգացման և առաջընթացի հիմնական գրավականը երիտասարդությունն է՝ իր նախաձեռնողականությամբ, մտավոր և ֆիզիկական թարմ կարողություններով, զարգացման առաջանցիկ տեմպերով, առաջացած խնդիրների լուծման պատրաստակամությամբ, հայրենիքի պաշտպանության և բարօրության գործին անմնացորդ նվիրումով:

Մի րեւիներս, այսօր էլ Դուք անմասն չեք հայրենաշինության, պետականության ամրապնդման շնորհակալ և պատվաբեր գործում, և բավարար ներդրում ունեք գալիք սերունդներին ավելի կայուն խաղաղությամբ ու զարգացած տնտեսությամբ հայրենք փոխանցելու գործընթացում:

Հայաստանի Հանրապետության, մեր դեպքում՝ Վայոց ձորի մարզի լուսավոր ապագայի, ժողովրդի բարօրության բարձր պատասխանատվությունը պայմանավորված է նաև այսօրվա երիտասարդությամբ, որպես Երկրի վաղվա օրվա տերեր և պատասխանատուներ:

Կրկին սիրով շնորհավորում եմ Ձեզ Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ, մաղթում եմ, որ Ձեր կյանքն ու գործունեությունն անցնի կապույտ երկնի ներքո, վայելեք խաղաղ հայրենիքում ապրելու և գործելու բախտավորությունը: Ձեզ՝ անձնական երջանկություն և հաջողություններ բոլոր ձեռնարկներում: